Կազմված է 16.08.2022թ. և բաղկացած է 20 թերթից

Տպագրված է ընդամենը 2 օրինակ

ՕՐԻՆԱԿ 2

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ-ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ մասնակիցների 16.08.2022թ. կայացած արտահերթ ընդհանուր ժողովի որոշմամբ, արձանագրություն N7

«ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ

Տնօրեն Ա. Բաբլոյան

ԳՐԱՆՑՎԱԾ Է

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԵՏԱԿԱՆ ՌԵԳԻՍՏՐԻ ԿՈՂՄԻՑ
22.05.1997 թ.
գրանցման թիվ 264.110.03572
ՀՎՀՀ 00009615
04.08.2022թ. գրանցված
կանոնադրության թիվ 001. 2
փոփոխությունը գրանցված է ՀՀ ԱՆ իրավաբանական անձանց պետական ռեգիստրի գործակալության կողմից
«__» _____ 20__ թ.

«ԱՐԱԲԿԻՐ»

ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ - ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

(Նոր խմբագրությամբ)

Երևան – 2022

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. «ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ - ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (հետագայում՝ Ընկերություն) իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է սույն կանոնադրությամբ սահմանված չափերով բաժնեմասերի: Ընկերության մասնակիցները պատասխանատու չեն Ընկերության պարտավորությունների համար և իրենց ներդրած ավանդների արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:

Ընկերությունը հանդիսանում է վերանվանված «ԱՐԱԲԿԻՐ» բժշկական համալիր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության իրավահաջորդը:

«ԱՐԱԲԿԻՐ» բժշկական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ստեղծվել է «ԱՐԱԲԿԻՐ» բժշկական կենտրոն վարձակալական ձեռնարկություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության վերակազմավորման ճանապարհով (Հայաստանի Հանրապետության կառավարության 1999թ. մայիսի 21-ի «Հայաստանի Հանրապետության պետական գույքի մասնավորեցման մասին» թիվ 334 որոշման համաձայն) և հանդիսանում է նրա իրավահաջորդը:

«ԱՐԱԲԿԻՐ» բժշկական համալիր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը ստեղծվել է Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002թ. սեպտեմբերի 12-ի «Հանրապետական մանկական կլինիկական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը վերակազմակերպելու մասին թիվ 1536-Ն և «ԱՐԱԲԿԻՐ» բժշկական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների 2003թ. հունվարի 27-ին կայացած արտահերթ ընդհանուր ժողովի որոշումների համաձայն Հայաստանի Հանրապետության Առողջապահության նախարարության «Հանրապետական մանկական կլինիկական հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերությունը (գրանցման թիվ՝ 264.140.00128, պետական գրանցման վկայական՝ 01 Ա 001156) «ԱՐԱԲԿԻՐ» բժշկական կենտրոն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը միացման ճանապարհով և հանդիսանում է նրա իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

21.01.2004թ. ընդհանուր ժողովի որոշման հիման վրա «ԱՐԱԲԿԻՐ» բժշկական համալիր սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը վերանվանվել է «ԱՐԱԲԿԻՐ» Բժշկական Համալիր - Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008թ. դեկտեմբերի 4-ի «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԹԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը վերակազմակերպելու մասին թիվ 1428-Ն որոշման և «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԹԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի և «ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ - ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների 16.12.2009թ. կայացած համատեղ ընդհանուր ժողովի որոշման համաձայն

կատարվել է «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԹԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության միացում Ընկերությանը:

Ընկերությունը հանդիսանում է «ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱԹԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» փակ բաժնետիրական ընկերության (գրանցված է Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի Արաբկիրի տարածքային բաժնի կողմից 13.03.2009թ., գրանցման թիվ՝ 264.120.08575, վկայական՝ 03 Ա 084025) իրավահաջորդը՝ փոխանցման ակտին համապատասխան:

1.2. Ընկերության իրավունակությունը ծագում է նրա ստեղծման (պետական գրանցման) և դադարում է լուծարման ավարտի պահից:

1.3. Ընկերությունն ունի իր ֆիրմային անվանումը (հայերեն, ռուսերեն և անգլերեն գրառումներով), ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից սահմանված այլ վավերապայմաններ պարունակող կլոր կնիք, կարող է ունենալ դրոշմներ և ձևաթղթեր, ինչպես նաև խորհրդանիշ, օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային, առևտրային և այլ նշաններ ու անհատականացնող այլ միջոցներ:

1.4. Ընկերությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական Օրենսգրքով (այսուհետ՝ Օրենսգիրք), «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով (այսուհետ՝ Օրենք), Հայաստանի Հանրապետության իրավական այլ ակտերով և սույն կանոնադրությամբ:

1.5. Ընկերության մասնակիցների և Ընկերության միջև հարաբերությունները կարգավորվում են Օրենսգրքով, Օրենքով և սույն կանոնադրությամբ:

1.6. Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատու է իրեն պատկանող ամբողջ գույքով:

Ընկերությունը պատասխանատու չէ իր մասնակիցների պարտավորությունների համար:

1.7. Հայաստանի Հանրապետությունը և համայնքները պատասխանատվություն չեն կրում Ընկերության պարտավորությունների համար: Ընկերությունն իր հերթին պատասխանատվություն չի կրում Հայաստանի Հանրապետության և համայնքների պարտավորությունների համար:

1.8. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ՝	«ԱՐԱԲԿԻՐ» ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼԻՐ - ԵՐԵԽԱՆԵՐԻ ԵՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԱՌՈՂՋՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն
կրճատ՝	«ԱՐԱԲԿԻՐ» ԲՀ - ԵԴԱԻ ՍՊԸ
ռուսերեն լրիվ՝	Общество с Ограниченной Ответственностью МЕДИЦИНСКИЙ КОМПЛЕКС “АРАБКИР” – ИНСТИТУТ ЗДОРОВЬЯ ДЕТЕЙ И ПОДРОСТКОВ
կրճատ՝	ООО МК “АРАБКИР” – ИЗДиП
անգլերեն լրիվ՝	"ARABKIR" MEDICAL CENTER & INSTITUTE OF CHILD AND ADOLESCENT HEALTH Limited Liability company
կրճատ՝	"ARABKIR" MC & ICAH LLC

1.9. Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, ք. Երևան - 0014, Մամիկոնյանց փող., թիվ 30:

2. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ ՈՒ ՆՊԱՏԱԿԸ

2.1. Ընկերության ստեղծման նպատակն է զարգացման ժամանակակից պահանջներին համապատասխան, բժշկագիտության նվաճումների ու տնտեսագիտական մեխանիզմների ներդրման միջոցով բնակչության առողջության պահպանման, բարձրորակ բժշկական օգնության և սպասարկման կազմակերպումը:

2.2. Ընկերության գործունեության հիմնական տեսակն է բժշկական օգնության կազմակերպումը, հիվանդանոցային և արտահիվանդանոցային (ամբուլատոր) գործունեությունը, այդ թվում՝

- մարդու առողջության պահպանմանը, հիվանդությունների հայտնաբերմանը, կանխարգելմանն ու բուժմանն ուղղված գործունեության իրականացում,
- երեխաների, դեռահասների և երիտասարդների հիվանդությունների հայտնաբերմանն ու բուժմանն ուղղված գործունեության իրականացում,
- բնակչության ֆիզիկական, մտավոր, լսողական, հոգեբանական և սոցիալական վերականգնողական գործունեության իրականացում,
- երեխաների և դեռահասների առողջության պահպանման, հիվանդությունների հայտնաբերման և բուժմանն ուղղված կազմակերպամեթոդական ու գիտահետազոտական գործունեության իրականացում,
- ձեռնարկությունների և կազմակերպությունների հետ կնքած պայմանագրերի սահմաններում անհրաժեշտ ամբուլատոր և ստացիոնար բժշկական օգնության իրականացում իրեն պատկանող կառույցներում ու ստորաբաժանումներում,
- առողջապահական ժամանակակից մոտեցումների, ուղեցույցների, ստանդարտների, բուժական, ախտորոշիչ մեթոդների մշակում, ուսուցում և ներդրում ինչպես իր կողմից ստեղծված ստորաբաժանումներում, այնպես էլ այլ առողջապահական և բժշկական հաստատություններում:

Պոթոմորֆոլոգիական ախտորոշիչ ծառայություն՝

- հիվանդությունների ճշտված ախտորոշումը՝ սեկցիոն (աուտոպսիոն), վիրահատական և բիոպսիոն նյութի հետազոտման միջոցով,
- բուժող բժիշկների հետ ախտորոշիչ և բուժական աշխատանքի վերլուծումը,
- կլինիկաախտաբանական կոնֆերանսների կազմակերպումը,
- հայտնաբերված սուր վարակիչ և հատուկ վտանգավոր հիվանդությունների մասին առողջապահության մարմիններին շտապ տեղեկացումը:

Իր առջև դրված նպատակների արդյունավետ կատարումն ապահովելու համար Ընկերությունը

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմակերպում և իրականացնում է բժշկական ապահովագրություն (ոչ կյանքի ապահովագրություն),
- ինքնուրույն և այլ կազմակերպությունների հետ համատեղ կազմված ծրագրերով և պայմանագրերով իրականացնում է մարդու առողջության պահպանմանն ուղղված գիտահետազոտական աշխատանքներ,
- մասնակցում է առողջապահության բնագավառում առողջապահության կազմակերպման, կառավարման, ֆինանսավորման, տնտեսվարման ժամանակակից մոդելների, մեխանիզմների, բուժօգնության բժշկական ստանդարտների մշակմանն ու ներդրմանը,

- իրականացնում է բնակչության բժշկահիգիենիկ դաստիարակության և կանխարգելիչ այլ միջոցառումներ,
- իրականացնում է ֆիզիկական, մտավոր, լսողական, հոգեբանական և սոցիալական վերականգնողական ծրագրերի ժամանակակից մեթոդների ներդրում և զարգացում,
- համագործակցելով առողջապահության, կրթության և սոցիալական ապահովության տարբեր կառավարական և ոչ կառավարական, պետական և ոչ պետական կազմակերպությունների հետ՝ իրականացնել ծրագրեր՝ ուղղված հատուկ կարիքներ ունեցող երեխաների, դեռահասների և այլ տարիքային խմբերին պատկանող անձանց բժշկական և սոցիալական վերականգնմանն ու հասարակության մեջ նրանց ինտեգրմանը,
- իրականացնում է աշխատաթերապիայի կազմակերպում, ներդրում և զարգացում,
- իրականացնում է բժշկական համալիրի աշխատակիցների կրթական ծրագրեր,
- մասնակցում է բժշկական կրթական ծրագրերին,
- նյութական օգնություն է ցուցաբերում առողջապահության ոլորտի տարբեր կազմակերպություններին,
- իրականացնում է գործունեության ընդլայնմանը, աշխատանքային պայմանների բարելավմանը, նոր սարքավորումների ձեռքբերմանը, կառույցների վերանորոգմանը, կադրերի վերապատրաստմանը և կատարելագործմանը, գիտահետազոտական աշխատանքների իրականացմանը, այլ նպատակներին ուղղված ներդրումային ծրագրեր,
- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով համագործակցում է առողջապահական և այլ հիմնարկների, իրավաբանական անձանց հետ,
- մատուցում է բնակչությանը վճարովի հատուկ ծառայություններ (բիոպսիաների, վիրահատական նյութի, աուտոպսիաների հետազոտություն),
- իրականացում է բնական գիտությունների բնագավառներում գիտական, գիտաբժշկական և փորձարարական հետազոտություններ,
- մասնակցում է բժշկական մասնագետների ու լաբորանտների դիպլոմային և հետդիպլոմային պատրաստմանն ու վերապատրաստմանը:

2.3. Ընկերությունը կարող է իրականացնել օրենքով չարգելված ցանկացած տնտեսական գործունեություն:

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակներով Ընկերությունը կարող է զբաղվել միայն լիցենզիայի (հատուկ թույլտվության) առկայության դեպքում՝ լիցենզիա ստանալու պահից կամ նրանում նշված ժամկետում: Եթե լիցենզիայի հատկացման պայմաններում նախատեսված է, որ Ընկերությունը բացի լիցենզավորվող գործունեությունից այլ գործունեությամբ զբաղվել չի կարող, կամ սահմանափակումներ են դրվում գործունեության առանձին տեսակներով զբաղվելու վրա, ապա Ընկերությունը լիցենզիայի գործողության ժամկետում իրավունք չունի զբաղվել այլ գործունեությամբ, բացառությամբ լիցենզիայով նախատեսվածների կամ այն գործունեություններով, որոնց մասին նշված է լիցենզիայի մեջ:

3. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ, ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պետական գրանցման պահից Ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Ընկերությունը, որպես սեփականություն, ունի առանձնացված գույք և իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր,

ձեռք բերել ու իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունն ունի ինքնուրույն հաշվեկշիռ, Հայաստանի Հանրապետության և (կամ) օտարերկրյա բանկերում՝ հաշվարկային բանկային հաշիվներ (դրամով, տարադրամով):

3.2. Ընկերությունը կարող է լինել այլ ընկերության (այդ թվում՝ դուստր ու կախյալ) հիմնադիր (մասնակից), բացառությամբ Օրենսգրքով և այլ օրենքներով նախատեսված դեպքերի:

3.3. Ընկերությունն իրավունք ունի ստեղծել առանձնացված ստորաբաժանումներ (մասնաճյուղեր և ներկայացուցչություններ), ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ այլ պետությունների տարածքում:

Կառավարչական, սոցիալ-մշակութային, կրթական կամ ոչ առևտրային բնույթի այլ գործունեություն իրականացնելու համար Ընկերությունը կարող է ստեղծել հիմնարկներ:

Ընկերության առանձնացված ստորաբաժանումները և հիմնարկները իրավաբանական անձինք չեն և գործում են Ընկերության հաստատած կանոնադրությունների հիման վրա, իսկ նրանց ղեկավարները գործում են Ընկերության լիազորագրերի հիման վրա:

3.4. Ընկերությունն իրավունք ունի.

- Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված ցանկացած ձևերով ձեռք բերել գույք, այդ թվում արժեթղթեր, տիրապետել, օգտագործել ու տնօրինել դրանք և դրանցից ստացված եկամուտը կամ այլ օգտակար արդյունքը,
- ինքնուրույն կազմավորել իր ֆինանսական ռեսուրսները, այդ թվում փոխառու միջոցների ներգրավմամբ, Հայաստանի Հանրապետությունում և այլ պետություններում ստանալ բանկային և առևտրային վարկեր, այդ թվում՝ արտարժույթով, օրենսդրությամբ սահմանված կարգով իր անունից թողարկել և տարածել արժեթղթեր,
- օտարել, վարձակալության տալ, փոխանակել, օրենսդրությամբ չարգելված այլ ձևերով փոխանցել գույքային իրավունքներ, լինել գրավառու և գրավատու,
- օրենսդրությամբ սահմանված կարգով արտահանել և ներմուծել գույքի օբյեկտներ, արտադրված, գնված և այլ օրինական ձևով ստացված արտադրանք, ծառայություններ մատուցել և աշխատանքներ կատարել օտարերկրյա իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների, կազմակերպությունների և քաղաքացիների համար, օգտվել նրանց կատարած աշխատանքներից և մատուցած ծառայություններից, այլ պետություններում նրանց օրենսդրությանը համապատասխան իրականացնել ներդրումներ, ստեղծել իրավաբանական անձինք և (կամ) ձեռնարկություններ և անդամակցել իրավաբանական անձանց և (կամ) ձեռնարկությունների,
- օգտվել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ իրավունքներից:

3.5. Ընկերությունը պարտավոր է.

- օրենսդրությամբ կամ այլ իրավական ակտերով սահմանված կարգով իրականացնել հաշվապահական հաշվառում և ներկայացնել վիճակագրական հաշվետվություն,
- աշխատանքային պայմանագրեր կնքել Ընկերության աշխատակիցների հետ,
- պատասխանատվություն կրել և փոխհատուցել իր կողմից հասցրած վնասը՝ կնքած պայմանագրերը չկատարելու կամ հարկ եղածին պես չկատարելու, այլ անձանց սեփականության իրավունքը խախտելու համար,
- օրենսդրությամբ սահմանված կարգով հայտարարել Ընկերության սնանկացման մասին այն դեպքում, երբ հնարավոր չէ բավարարել պարտատերերի օրինական գույքային պահանջները,
- տեղեկություններ հրապարակել ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին (Օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով ու ժամկետներում),

- անհապաղ տեղեկություններ հրապարակել սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կանոնադրական կապիտալի կամ բաժնետիրական ընկերության քվեարկող բաժնետոմսերի ավելի քան քսան տոկոսը ձեռք բերելու մասին,
- ապահովել Ընկերության փաստաթղթերի (Ընկերության կանոնադրության, գույքի նկատմամբ գույքային իրավունքները հաստատող փաստաթղթերի, Ընկերության ներքին փաստաթղթերի, առանձնացված ստորաբաժանումների ու հիմնարկների կանոնադրությունների, տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվառման փաստաթղթերի, կառավարման մարմինների նիստերի արձանագրությունների, Հայաստանի Հանրապետության օրենքներով և այլ իրավական ակտերով նախատեսված այլ փաստաթղթերի) պահպանումը,
- կրել օրենսդրությամբ և սույն կանոնադրությամբ սահմանված այլ պարտավորություններ:

4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԸ, ՆՐԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.1. Անձը համարվում է ընկերության մասնակից իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից Ընկերության մասնակիցների գրանցամատյանում գրանցվելու պահից: Մասնակիցները կարող են փոփոխվել Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով՝ մասնակիցների ընդունման, ազատման, հեռացման, ամբողջ բաժնեմասի օտարման միջոցով, ինչպես նաև մասնակցի ամբողջ բաժնեմասի վրա բռնագանձում տարածելու կամ այն բռնագրավելու դեպքում:

Ընկերությունը չի կարող որպես միակ մասնակից ունենալ մեկ անձից կազմված այլ տնտեսական ընկերություն:

4.2. Ընկերության մասնակիցներն իրավունք ունեն՝

- Օրենքով կամ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով մասնակցել Ընկերության կառավարմանը՝ ներկա գտնվել ընդհանուր ժողովին, հանդես գալ առաջարկություններով, մասնակցել օրակարգային հարցերի քննարկմանը և քվեարկել որոշումներ ընդունելիս
- ստանալ Ընկերության գործունեությունից ստացվող շահույթի մասը,
- Ընկերության լուծարման դեպքում ստանալ շահույթի իր մասը, պարտատերերի հետ կատարված հաշվարկներից հետո մնացած գույքի մասը կամ դրա արժեքը,
- սույն կանոնադրությամբ սահմանված կարգով տեղեկություններ ստանալ Ընկերության գործունեության մասին՝ գաղտնի փաստաթղթերից բացի, ծանոթանալ հաշվապահական հաշվառման, հաշվետվության, Ընկերության արտադրատնտեսական գործունեության այլ փաստաթղթերի հետ,
- ցանկացած պահի դուրս գալ ընկերությունից (անկախ մյուս մասնակիցների համաձայնությունից),
- հայցով դիմել դատարան՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին և այլ իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով,
- Ընկերության գույքի հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնեմասեր,
- օգտվել Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներից:

4.3. Ընկերության մասնակիցները պարտավոր են՝

- սույն կանոնադրությամբ սահմանված կարգի համաձայն կատարել ներդրումներ Ընկերության կանոնադրական կապիտալում
- չհրապարակել Ընկերության գործունեության վերաբերյալ գաղտնիք պարունակող տեղեկություններ
- կատարել Ընկերության նկատմամբ ստանձնած պարտավորությունները
- պահպանել սույն կանոնադրության դրույթները:

4.4. Ընկերության կանոնադրական կապիտալում բաժնեմասը փոխանցելը.

4.4.1. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր բաժնեմասը (դրա մասը) վաճառել կամ այլ՝ օրենքով չարգելված ձևով, օտարել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների, ինչպես նաև երրորդ անձանց: Ընդ որում, մյուս մասնակիցներն ունեն այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք՝ Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համամասնորեն:

Եթե Ընկերության մյուս մասնակիցները չեն օգտագործել բաժնեմասը (դրա մասը) գնելու իրենց նախապատվության իրավունքը կամ այդ իրավունքը օգտագործել են մասամբ, ապա Ընկերությունն ունի այդ բաժնեմասը նույն գնով ձեռքբերման նախապատվության իրավունք:

Մասնակիցների, ինչպես նաև Ընկերության կողմից իրենց վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման նախապատվության իրավունքը չիրականացնելու դեպքում բաժնեմասերը կարող են օտարվել երրորդ անձանց:

Օրենքով նախատեսված բաժնեմասը գնելու նախապատվության իրավունքի զիջում չի թույլատրվում:

4.4.2. Երրորդ անձանց օտարման անհնարինության դեպքում մասնակցի պահանջով Ընկերությունն ինքը պարտավոր է ձեռք բերել մասնակցի բաժնեմասը, այն իրացնել մեկ տարվա ընթացքում այլ մասնակիցների կամ երրորդ անձանց կամ որոշում ընդունել բաժնեմասի չբաշխված մասի մարման ճանապարհով Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցման մասին:

4.4.3. Նախապատվության իրավունքի (այլ մասնակիցների կողմից վաճառվող բաժնեմասերի ձեռքբերման) իրականացման ժամկետը սահմանվում է մեկ ամիս:

4.5. Ընկերության կանոնադրական կապիտալի բաժնեմասերն անցնում են Ընկերության մասնակից քաղաքացիների ժառանգներին և իրավաբանական անձանց իրավահաջորդներին միայն Ընկերության մնացած բոլոր մասնակիցների համաձայնությամբ: Ընդ որում բաժնեմասն անցնելու համար համաձայնություն չտալու, ինչպես նաև ժառանգի (իրավահաջորդի) բաժնեմասից հրաժարվելու դեպքում դրա արժեքի վճարումը կատարվում է սույն կանոնադրության 4.7. կետում սահմանված կարգով:

4.6. Ընկերության մասնակիցը (մասնակիցները), որը (որոնք) գումարային առումով տնօրինում է (են) ընկերության առնվազն 10 տոկոս բաժնեմասը, իրավունք ունի (ունեն) դատական կարգով պահանջել ընկերության այլ մասնակցի հեռացումն ընկերությունից, եթե նա իր գործողություններով կամ անգործությամբ դժվարացնում կամ անհնարին է դարձնում ընկերության բնականոն գործունեությունը:

Ընկերությունից հեռացված մասնակցի բաժնեմասն անցնում է ընկերությանը: Ընկերությունը պարտավոր է հեռացված մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը սույն կանոնադրության 4.7. կետով սահմանված կարգով:

4.7. Ընկերությունից դուրս եկող մասնակցի բաժնեմասը դուրս գալու դիմումը ներկայացնելու պահից փոխանցվում է ընկերությանը:

Ընկերության մասնակցի՝ ընկերությունից դուրս գալու հետ կապված հաշվարկները կատարվում են հետևյալ կարգով.

- վճարվում է կանոնադրական կապիտալում նրա բաժնեմասի (կանոնադրական կապիտալում նրա ավանդի ոչ լրիվ վճարման դեպքում՝ վճարված մասին համապատասխան բաժնեմասի) արժեքը,
- բաժնեմասի արժեքը որոշվում է դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահին Ընկերության վերջին հաշվետու ժամանակաշրջանի հաշվապահական հաշվետվությունների հիման վրա,
- մասնակցին նրա համաձայնությամբ կարող է տրվել նրա բաժնեմասի արժեքին համապատասխան գույք՝ ընդհանուր ժողովի որոշմամբ,

- եթե Ընկերության կանոնադրական կապիտալում որպես ավանդ մասնակցի կողմից ներդրվել է գույքի օգտագործման իրավունք, ապա Ընկերությունն այն պահպանում է մինչև օգտագործման իրավունքի ժամկետի ավարտը,
- մասնակիցը պարտավոր չէ վերադարձնել իր կողմից բարեխղճորեն ստացած շահույթը:

Ընկերությունը պարտավոր է մասնակցին վճարել բաժնեմասի արժեքը ընկերությունից դուրս գալու մասին դիմումը ներկայացնելու պահից՝ 6 ամսվա ընթացքում:

4.8. Ընկերության մասնակիցն իրավունք ունի իր սեփականությունը հանդիսացող բաժնեմասը (դրա մասը) գրավ դնել Ընկերության մեկ կամ մի քանի մասնակիցների և երրորդ անձանց: Գրավի իրավունքը ծագում է իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնի կողմից գրավի իրավունքի գրանցման պահից: Գրավ դրված բաժնեմասի (դրա մասի) վրա բռնագանձում տարածելու դեպքում Ընկերության մյուս մասնակիցները և Ընկերությունը օգտվում են բաժնեմասը (դրա մասը) ձեռք բերելու նախապատվության իրավունքից Օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով:

5. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ, ՆՐԱ ՓՈՓՈԽՈՒՄԸ

5.1. Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է

3.980.102.218 (երեք միլիարդ ինը հարյուր ութսուն միլիոն մեկ հարյուր երկու հազար երկու հարյուր տասնութ) դրամ՝ 1,718,807,150.67200 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 648,257,695.72138 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 481,584,654.12680 դրամ անվանական արժեքով թվով երկու, 94,460,770.33163 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 85,179,967.86298 դրամ անվանական արժեքով թվով երկու, 82,594,904.16166 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 73,907,395.00151 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 66,957,387.67339 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 46,319,256.15634 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 45,239,683.74523 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 36,346,990.80925 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 16,357,944.07717 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 10,679,279.55297 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 3,961,282.76667 դրամ անվանական արժեքով թվով մեկ, 2,683,233.27125 դրամ անվանական արժեքով թվով մեկ (ընդամենը տասնյոթ բաժնեմաս):

Կանոնադրական կապիտալը սահմանում է պարտատերերի շահերը երաշխավորող ընկերության գույքի նվազագույն չափը: Ընկերության կանոնադրական կապիտալը չպետք է պակաս լինի «Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափից:

Ընկերության կանոնադրական կապիտալի բոլոր բաժնեմասերը տեղաբաշխված են, լրիվ վճարված և պատկանում են Ընկերության մասնակիցներին, որոնց ցանկը և յուրաքանչյուրի ունեցած բաժնեմասի չափը (բաժնեմասը) բերված է սույն կանոնադրության բաղկացուցիչ մաս հանդիսացող հավելվածում:

5.2. Ընկերության մասնակիցները կարող են իրենց բաժնեմասերը օտարել սույն կանոնադրության 4.4. կետով սահմանված կարգով:

5.3. Ընկերությունը կարող է փոփոխել կանոնադրական կապիտալի մեծությունը: Այդ մասին որոշումն ուժի մեջ է մտնում պետական ռեգիստրում համապատասխան փոփոխությունների պետական գրանցման պահից:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը հնարավոր է միայն նրա ամբողջությամբ վճարումից հետո:

Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացումը կարող է կատարվել.

- Ընկերության գույքի հաշվին,

- Ընկերության մասնակիցների լրացուցիչ ավանդների հաշվին,
- երրորդ անձանց ավանդների հաշվին:

Ընկերության մասնակիցների լրացուցիչ կամ երրորդ անձանց ավանդների հաշվին կանոնադրական կապիտալի ավելացման մասին որոշումն ընդունվում է ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ, որով որոշվում է լրացուցիչ ներդրումների գումարային արժեքը և ներդրումների կատարման կարգն ու ժամկետները: Այդ որոշմամբ պետք է սահմանվի լրացուցիչ ավանդների ընդհանուր արժեքը, ինչպես նաև սահմանվի լրացուցիչ ավանդի արժեքի և այն գումարի՝ բոլոր մասնակիցների համար միասնական հարաբերակցությունը, որով ավելացվում է նրա բաժնեմասի անվանական արժեքը: Սահմանված ժամկետի ավարտից հետո մեկ ամսվա ընթացքում Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը պարտավոր է որոշում ընդունել (ձայների որակյալ մեծամասնությամբ) լրացուցիչ ավանդների ներդրման արդյունքների, ներդրումների հաշվին ձևավորված կանոնադրական կապիտալի, Ընկերության մասնակիցների բաժնեմասերի չափերի փոփոխման և սույն կանոնադրության փոփոխությունը հաստատելու մասին:

Լրացուցիչ ավանդները ներդրվում են այդ մասին որոշում ընդունելուց հետո մեկ տարվա ընթացքում:

Ընկերության մասնակիցների կողմից լրացուցիչ ավանդների ներդրման միջոցով կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են Օրենքով:

Ընկերության մասնակցի կամ երրորդ անձի դիմումի հիման վրա ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման կարգն ու պայմանները սահմանվում են Օրենքով:

Ընկերությունն իրավունք ունի, իսկ Օրենքով սահմանված դեպքերում պարտավոր է նվազեցնել իր կանոնադրական կապիտալը:

Եթե երկրորդ կամ յուրաքանչյուր հաջորդ ֆինանսական տարվա ավարտից հետո Ընկերության զուտ ակտիվների արժեքը պակաս է կանոնադրական կապիտալից, ապա ընկերությունը պարտավոր է հայտարարել իր կանոնադրական կապիտալի նվազման մասին և սահմանված կարգով գրանցել դրա նվազումը: Եթե Ընկերության նշված ակտիվների արժեքը պակասում է զրոյից, Ընկերությունը ենթակա է լուծարման:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում թույլատրվում է նրա բոլոր պարտատերերին և իրավաբանական անձանց պետական գրանցումն իրականացնող մարմնին Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում տեղեկացնելուց հետո: Ընկերության պարտատերերն իրավունք ունեն պահանջել իրենց նկատմամբ Ընկերության պարտավորությունների կատարման լրացուցիչ երաշխիքներ կամ պարտավորությունների վաղաժամկետ դադարում կամ կատարում, ինչպես նաև իրենց վնասների հատուցում:

Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցում կարող է կատարվել բոլոր մասնակիցների բաժնեմասերի անվանական արժեքների նվազեցմամբ և (կամ) Ընկերությանը պատկանող բաժնեմասերի մարմամբ:

Կանոնադրական կապիտալի ավելացման կամ նվազեցման մասին որոշումն ուժի մեջ է մտնում այդ փոփոխության պետական գրանցման պահից:

Ընկերության կանոնադրական կապիտալում ընկերության մասնակցի բաժնեմասի վրա բռնագանձում տարածելը կամ բռնագրավումը կատարվում է Օրենսգրքով և Օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

6. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՒՅՔԸ, ԿԱՊԻՏԱԼՆԵՐՆ ՈՒ ՇԱՀՈՒՅԹԸ

6.1. Ընկերությունը հանդիսանում է սեփականատեր՝

- Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) ավանդների և դրանց հաշվին ստեղծված գույքի,
- Ընկերության տնտեսական գործունեության հետևանքով արտադրած արտադրանքի և ձեռք բերած գույքի,
- ստացված եկամուտների,

– գործող օրենսդրությամբ չարգելված հիմունքներով ձեռք բերած գույքի:

Ընկերության սեփականության ներքո կարող է գտնվել ցանկացած գույք՝ բացառությամբ գույքի առանձին տեսակների, որոնք օրենքին համապատասխան չեն կարող պատկանել իրավաբանական անձանց:

Ընկերության գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու, իրավունքը դադարելու, գույքը տիրապետելու, օգտագործելու ու տնօրինելու առանձնահատկությունները, կապված գույքը Ընկերության սեփականությանը պատկանելու հանգամանքի հետ, սահմանվում են միայն օրենքներով:

6.2. Ընկերության մասնակցի ներդրումը կարող է լինել դրամ, արժեթղթեր, այլ գույք կամ գույքային իրավունքներ, ինչպես նաև դրամական գնահատում ունեցող այլ իրավունքներ:

Ներդրվող գույքի արժեքը որոշվում է Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) միջև համաձայնությամբ և ենթակա է անկախ փորձագիտական վերստուգման (աուդիտի):

Ընկերության հիմնադիրների (մասնակիցների) կամ ընկերության մեջ ընդգրկվող երրորդ անձանց կողմից ներդրվող ոչ դրամային ավանդների դրամական գնահատականը հաստատվում է ընդհանուր ժողովի կողմից՝ միաձայն կարգով և պետք է գնահատվի անկախ գնահատողի (աուդիտորի) կողմից:

Կանոնադրական կապիտալում մասնակցի բաժնեմասը գնահատվում է տեղական արժույթով:

6.3. Եթե գույքը, նյութական արժեքները, ֆինանսական և այլ ռեսուրսները փոխանցվում են Ընկերությանը միայն օգտագործման նպատակով, ապա ներդրման չափը և համապատասխանաբար մասնակից-վարձատուի բաժնեմասը որոշվում է ելնելով այդ գույքի օգտագործման դիմաց տրվող վարձակալական վճարից:

6.4. Ընկերությունում ստեղծվում է պահուստային կապիտալ կանոնադրական կապիտալի 15%-ի չափով: Այս կապիտալի ձևավորումը իրականացվում է շահույթից կատարվող տարեկան մասհանումների միջոցով մինչև նախատեսված չափերին հասնելը: Պահուստային կապիտալ կատարվող մասհանումների չափը սահմանվում է մաքուր շահույթի առնվազն 5%-ի չափով: Պահուստային կապիտալի միջոցների ծախսման կարգը որոշվում է մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից:

6.5. Սահմանված կարգով առաջացող մաքուր շահույթի բաշխումը Ընկերության մասնակիցների միջև իրականացվում է կանոնադրական կապիտալում մասնակիցների ունեցած բաժնեմասերին համապատասխան՝ Օրենքով սահմանված կարգով:

7. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

- Ընկերության կառավարման մարմիններն են՝ Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, կառավարման խորհուրդը, գործադիր մարմինը՝ տնօրենը:

7.1. Մասնակիցների ընդհանուր ժողով

7.1.1. Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն է, որն ունի Ընկերության կառավարման և գործունեության ցանկացած հարցի վերջնական լուծման իրավունք:

7.1.2. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովներում քվեարկությունների ժամանակ Ընկերության մասնակիցներն ունեն Ընկերության կանոնադրական կապիտալում իրենց բաժնեմասերին համապատասխան ձայների քանակ:

7.1.3 Ընկերության տնօրենը պարտավոր է տարին մեկ անգամ գումարել մասնակիցների հերթական հաշվետու ընդհանուր ժողով՝ Ընկերության գործունեության տարեկան հաշվետվության արդյունքները հաստատելու համար: Նշված հերթական ընդհանուր ժողովը հրավիրվում է տարեկան մեկ անգամ ֆինանսական տարվա ավարտից ոչ շուտ, քան երկու ամիս և ոչ ուշ, քան վեց ամիս անց:

7.1.4. Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողով կարող է հրավիրվել Ընկերության տնօրենի կողմից, ելնելով Ընկերության շահերից, Օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված դեպքերում, ինչպես նաև բոլոր այն դեպքերում, երբ դա են պահանջում Ընկերության և նրա մասնակիցների շահերը:

7.1.5. Ընկերության մասնակիցների արտահերթ ընդհանուր ժողով կարող է հրավիրվել խորհրդի որոշմամբ՝ սեփական նախաձեռնությամբ, կառավարման խորհրդի նախագահի կամ պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ լիազորություններին վերաբերող հարցերի շուրջ, որը ներառված է կանոնադրության 7.1.10. կետի ենթակետերով:

- Պահանջը ներկայացնելու պահի դրությամբ ընկերության՝ գումարային առումով առնվազն 10 տոկոս քվեարկող բաժնեմասի սեփականատեր մասնակցի (մասնակիցների) պահանջով արտահերթ ընդհանուր ժողով գումարվելու դեպքում ժողովի գումարման ձևը և օրակարգը սահմանում է (են) այն գումարելու պահանջը ներկայացրած մասնակիցը (մասնակիցները):
- Եթե պահանջում նշված ժամկետում տնօրենը արտահերթ ընդհանուր ժողովի գումարման մասին որոշում չի ընդունում կամ որոշում է ընդունում դրա գումարումը մերժելու մասին, ապա արտահերթ ընդհանուր ժողովը կարող են գումարել ժողովի գումարման մասին պահանջ ներկայացրած անձինք:

7.1.6. Մասնակիցների ընդհանուր ժողովի բացումից առաջ կատարվում է ընկերության ժամանած մասնակիցների գրանցում:

7.1.7. Մասնակիցների ընդհանուր ժողովը բացվում է ընդհանուր ժողովի անցկացման մասին ծանուցման մեջ նշված ժամին, կամ եթե ընկերության բոլոր մասնակիցներն արդեն գրանցվել են, ավելի վաղ:

7.1.8. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավազոր է, եթե դրան մասնակցում են Ընկերության մասնակիցների ձայների ընդհանուր թվի կեսից ավելիին տնօրինող մասնակիցները: Սույն կանոնադրությամբ նախատեսված դեպքերում (երբ քննարկվող հարցը պահանջում է բոլոր մասնակիցների միաձայնությունը) ժողովը իրավասու է բոլոր մասնակիցների (նրանց ներկայացուցիչների) ներկայության դեպքում:

7.1.9. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահն ընտրվում է ամեն ժողովից առաջ ընդհանուր ժողովի մասնակիցներից ձայների մեծամասնությամբ:

7.1.10. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանն են պատկանում՝

ա) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը, Ընկերության կանոնադրության հաստատումը նոր խմբագրությամբ,
բ) Ընկերության կողմից բաժնեմասի (բաժնեմասերի) ձեռքբերումը և դրանց իրացումը Օրենքով սահմանված դեպքերում,
գ) Ընկերության վերակազմակերպումը,
դ) Ընկերության լուծարումը,
ե) Ընկերության լուծարման հանձնաժողովի նշանակումը և լուծարման հաշվեկշիռների (լուծարման ամփոփիչ, լուծարման միջանկյալ և լուծարման հաշվեկշիռներ) հաստատումը,
զ) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի ավելացումը,
է) Ընկերության կանոնադրական կապիտալի չափի նվազեցումը,
ը) Կազմակերպությունների (այդ թվում՝ դուստր և կախյալ ընկերությունների) հիմնադրումը,
թ) Կազմակերպություններում (այդ թվում դուստր և կախյալ ընկերություններում) մասնակցության մասին որոշումների ընդունումը,
ժ) Ընկերության տնօրենի ընտրությունը և լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը,
ի) Խորհրդի անդամների վաղաժամ դադարեցումը,
լ) Ընկերության տարեկան հաշվետվությունների, տարեկան հաշվապահական հաշվեկշռի հաստատումը,

խ) Ընկերության շահույթն ու վնասները ընկերության մասնակիցների միջև բաշխման մասին որոշման ընդունումը,

ծ) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը,

կ) Ընկերության կողմից արժեթղթերի թողարկման մասին որոշում ընդունելը,

հ) Ընկերության աուդիտի իրականացման որոշումն ընդունելը,

ձ) Ընկերության առանձնացված ստորաբաժանումների և հիմնարկների ստեղծումը, գործունեության դադարեցումը, դրանց կանոնադրությունների հաստատումը:

ղ) Ընկերության կողմից ուղղակիորեն և անուղղակիորեն գույք ձեռք բերելը, օտարելը, որի արժեքը կազմում է նման գործարքներ կատարելու մասին որոշման ընդունման օրվա դրությամբ ընկերության զուտ ակտիվների արժեքի 25%-ից ավելին:

Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովն իրավունք ունի քննարկել և որոշումներ ընդունել նաև Օրենքով և սույն կանոնադրությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը պատկանող ցանկացած հարցի շուրջ:

Կանոնադրության 7.1.10. կետի բոլոր ենթակետերով սահմանված հարցերը հանդիսանում են Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասության հարցեր և չեն կարող փոխանցվել ընկերության գործադիր մարմնին:

7.1.11. Սույն կանոնադրության 7.1.10. կետի ա., զ., է. ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների երեք քառորդով, սակայն ոչ պակաս Ընկերության բոլոր մասնակիցների ձայների երկու երրորդից, 7.1.10. կետի ժ. և ձ. ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների երեք քառորդով, խ. և ծ. ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցողների ձայների երկու երրորդով, սակայն ոչ պակաս Ընկերության բոլոր մասնակիցների ձայների կեսից, գ. և դ. ենթակետերով սահմանված հարցերի շուրջ որոշումներն ընդունվում են Ընկերության մասնակիցների միաձայն որոշմամբ, իսկ մնացած հարցերի շուրջ՝ Ընկերության բոլոր մասնակիցների ձայների մեծամասնությամբ:

7.1.12. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի իրավասությանը վերաբերվող հարցերի լուծումը կատարվում է ժողովի նիստում՝ օրակարգի հարցերի քննարկման, քվեարկության դրված հարցերի վերաբերյալ որոշումների ընդունման նպատակով մասնակիցների համատեղ ներկա գտնվելով, կամ հեռակա կարգով քվեարկության (հարցման) միջոցով: Այդ դեպքում որոշման նախագիծը ուղարկվում է մասնակիցներին, որոնք պետք է գրավոր հայտնեն իրենց կարծիքը: Նման քվեարկություն կարող է անցկացվել փաստաթղթերը փոստային, հեռագրային, հեռատիպային, հեռախոսային, էլեկտրոնային կամ փոխանցվող և ընդունվող հաղորդագրությունների իսկությունը և դրանց փաստաթղթային հաստատումն ապահովող կապի այլ միջոցներով փոխանակելու միջոցով:

7.1.13. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովների որոշումներն ընդունվում են բաց քվեարկությամբ:

7.1.14. Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողով հրավիրող մարմինը կամ անձինք պարտավոր են ժողովի անցկացման օրվանից ամենաուշը քսան օր առաջ այդ մասին ծանուցել ընկերության մասնակիցներին՝ փոստային առաքման, էլեկտրոնային կամ այլ եղանակներով:

7.1.15. Ծանուցման մեջ պետք է նշված լինի ընդհանուր ժողովի անցկացման ժամը և տեղը, ինչպես նաև առաջարկվող օրակարգը:

7.1.16. Ընկերության ցանկացած մասնակից իրավասու է առաջարկ ներկայացնել ընդհանուր ժողովի օրակարգում լրացուցիչ հարցերի ընդգրկման մասին ոչ ուշ, քան դրա անցկացումից տասն օր առաջ: Բացառությամբ ընդհանուր ժողովի իրավասությանը չվերաբերող կամ օրենքի պահանջներին չհամապատասխանող հարցերի, լրացուցիչ հարցերն ընդգրկվում են ընդհանուր ժողովի օրակարգում:

7.2. Կառավարման խորհուրդ

- Իրականացնում է Ընկերության ընդհանուր կառավարումը:
- Խորհուրդն իրականացնում է Ընկերության գործունեության ընդհանուր ղեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք կանոնադրությամբ վերապահված են ժողովի բացառիկ իրավասությանը:
- Խորհուրդը բաղկացած է հինգ անդամից:
- Խորհուրդն ընտրվում է 5 տարի ժամկետով Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից հերթական կամ արտահերթ նիստով:

7.2.1. Կառավարման խորհուրդը և իր իրավասությունները՝

ա) Ընդունում է ներքին իրավական ակտեր, որոշումներ Ընկերության գործունեությունը կանոնակարգելու նպատակով:
բ) Առնվազն վեց ամիսը մեկ անգամ գումարում է խորհրդի նիստ:
գ) Քննարկում և հաստատում է Ընկերության տարեկան ծրագիրը և բյուջեն (նոյեմբեր, դեկտեմբեր ամիսներին):
դ) Հաստատում է Ընկերության ներքին և արտաքին աուդիտն իրականացնող անձանց:
ե) Հաստատում է ներքին աուդիտի տարեկան ծրագիրը:
զ) Ընդունում է որոշումներ Ընկերության գույքի օտարման և ձեռքբերման հետ կապված խոշոր գործարքներ կատարելու մասին (որոնց արժեքը գտնվում է զուտ ակտիվների մեծության մինչև 25%-ի սահմաններում):
է) Կարող է անվստահություն հայտնել Ընկերության տնօրենի վարած քաղաքականության, գործառույթների վերաբերյալ՝ հայտնելով հիմնավոր պատճառներ, և գործադիր մարմնի իր պաշտոնին համապատասխանության հարցը թողնել մասնակիցների ընդհանուր ժողովի քննարկմանը:
ը) Հաստատում է ընկերության հաստիքացուցակը:
թ) Քննարկում և ընդունում է որոշումներ այն դեպքերում, երբ առաջանում են վեճեր կամ անհամաձայնություններ աշխատակիցների և տնօրենների միջև:

7.2.2. Խորհրդի անդամներ՝

ա) Խորհրդի անդամներին ընտրում է ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը՝ ձայների մեծամասնությամբ:
բ) Խորհրդի անդամներ կարող են լինել ընկերության մասնակիցները, ինչպես նաև նրանց ներկայացուցիչները:
գ) Մի խումբ մասնակիցներ, որոնց մասնակցության ձայների գումարային թիվը 7% և ավելի է կարող են ընդգրկվել խորհուրդ մեկ միասնական ներկայացուցչի միջոցով: Այս գործառույթը իրականացնելու նպատակով մասնակիցները պետք է կնքեն պայմանագիր միմյանց միջև՝ այդ մասին հայտարարելով մասնակիցների ընդհանուր ժողովին:
դ) Ընկերությունում 10% և ավելի մասնակցություն ունեցող մասնակիցները խորհրդին կարող են անդամակցել առաց ընտրության:

7.2.3. Խորհրդի նախագահը և իր իրավասությունները՝

ա) Ընտրվում է խորհրդի անդամներից խորհրդի անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ՝ 5 (հինգ) տարի ժամկետով:
բ) Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի նախագահի և խորհրդի նախագահի միջև աշխատանքային պայմանագիրը կնքելիս Ընկերության անունից հանդես է գալիս այն անձը, ով նախագահել է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովը, որի ժամանակ հաստատվել է խորհրդի կազմը (լիազորված անձը պետք է լինի Ընկերության մասնակիցներից որևիցե մեկը):

գ) Իրականացնում է Ընկերության կառավարման խորհրդի աշխատանքների կազմակերպումը և համակարգումը:

դ) Հրավիրում է խորհրդի հերթական և արտահերթ նիստեր և նախագահում դրանք:

ե) Հաստատում է նիստերի արձանագրություններն ու որոշումները:

զ) Խորհրդի նախագահն աջակցում է Ընկերության ընդհանուր կառավարմանը՝ համակարգելով տարբեր ստորաբաժանումների պատասխանատուների աշխատանքը,

է) Ներկայացնում է Ընկերությունը տարբեր տեղական, միջազգային կառույցներում և կայացնում է իր իրավասությունների շրջանակներում (կանոնադրությամբ) իրեն վերապահված որոշումներ,

ը) Հաստատում է խորհրդի կողմից որոշված բոլոր որոշումները:

թ) Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը:

- Խորհրդի նախագահի անմիջական կառավարման և վերահսկման հիմնական ուղղություններն են՝

ժ) Մշակել և խորհրդի հաստատմանը ներկայացնել ծրագրեր, որոնք ուղղված են Ընկերության շարունակական զարգացմանը:

ի) Իրականացնել վերահսկողություն Ընկերության գործունեության նկատմամբ Ընկերության կանոնադրության, ՀՀ օրենքների և Սահմանադրության պահանջներին համապատասխան:

լ) Աջակցել տնօրինությանը ծառայությունների զարգացմանն ուղղված ռազմավարական ծրագրերի մշակման ու ներդրման գործում, ինչպես նաև միջոցառումներ ձեռնարկել նորագույն տեխնոլոգիաներով հագեցվածության ապահովման ուղղությամբ:

խ) Ընկերությունը ներկայացնել օտարերկրյա պետություններում՝ անմիջական կապեր ստեղծելով այլ երկրների համապատասխան բժշկական, ուսումնական, գիտական հաստատությունների ու կազմակերպությունների հետ:

ծ) Աջակցել մասնագետների պատրաստման, վերապատրաստման, որակավորման բարձրացմանը՝ համագործակցելով տարբեր կառույցների հետ:

կ) Ապահովել օտարերկրյա մասնագետների ներգրավումը Ընկերության ուսումնական և գիտական գործընթացներում, ինչպես նաև կլինիկական աշխատանքներում:

հ) Աջակցել հանրապետական, միջազգային գիտաժողովների, կոնֆերանսների և սեմինարների կազմակերպմանը և/կամ մասնակցությանը:

ձ) Աջակցել Ընկերության շենքային պայմանների և մասնաճյուղերի բարելավմանն ու ընդլայնմանն ուղղված շինարարական և վերանորոգման ծրագրերի մշակմանն ու իրականացմանը:

ղ) Իրականացնել Ընկերության տարեկան բյուջեի ընթացիկ վերահսկողությունը:

ճ) Կազմակերպել և կոորդինացնել տնօրենի, բժշկական տնօրենի և այլ ղեկավար մարմինների հետ համատեղ աշխատանքները:

մ) Անդրադառնալ աշխատակիցների և Ընկերության ղեկավար անձնակազմի միջև ծագած վեճերին և/կամ անհամաձայնություններին՝ ձգտելով խնդրի լուծման արդյունավետ տարբերակ գտնել՝ բանակցելով կողմերի հետ, անհնարինության դեպքում հարցը ներկայցնել խորհրդի քննարկման:

7.2.4. Խորհրդի նիստ

ա) Խորհրդի նիստի քվորումն ապահովված է համարվում, երբ խորհրդի նիստին ներկա են առնվազն 3 անդամ:

բ) Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա խորհրդի անդամների ձայների մեծամասնությամբ:

գ) Խորհրդի նիստերը հրավիրվում են փոստային առաքման, էլեկտրոնային կամ այլ եղանակներով:

դ) Քվեարկության ժամանակ խորհրդի յուրաքանչյուր անդամ ունի միայն 1 ձայնի իրավունք: Ձայնի և քվեարկության իրավունքի փոխանցումը խորհրդի մեկ անդամից մյուսին (այդ թվում՝ ցանկացած երրորդ անձի) չի թույլատրվում:

ե) Քվեարկության արդյունքում, եթե ձայների թիվը բաշխված է երկու հավասար /դեմ և կողմ/ թվի, ապա Խորհրդի նախագահն ունի որոշիչ ձայնի իրավունք:

զ) Խորհրդի նիստերն արձանագրվում են:

Արձանագրությունում նշվում են՝

1. նիստի գումարման տարին, ամիսը, ամսաթիվը, ժամը և վայրը.
2. նիստին ներկա անձինք.
3. նիստի օրակարգը.
4. քվեարկության դրված հարցերը և քվեարկության արդյունքները.
5. նիստում ընդունված որոշումները.

7.3. Գործադիր մարմին՝ տնօրեն

7.3.1. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացվում է Ընկերության տնօրենի կողմից: Ընկերության տնօրենը հաշվետու է ընդհանուր ժողովին և Ընկերության կառավարման խորհրդին:

7.3.2. Ընկերության տնօրենն ընտրվում է Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի կողմից 5 (հինգ) տարի ժամկետով:

7.3.3. Ընկերության և Ընկերության տնօրենի աշխատանքային պայմանագիրը ստորագրվում է Ընկերության տնօրենին ընտրած ընդհանուր ժողովը նախագահող անձը:

7.3.4. Ընկերության Տնօրենը լուծում է բոլոր հարցերը, բացի Ընկերության մասնակիցների ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը վերաբերվող հարցերից:

7.3.5. Ընկերության Տնօրենը հրավիրում է Ընկերության մասնակիցների հերթական տարեկան հաշվետու ընդհանուր ժողովը և ներկայացնում է տարեկան հաշվետվություն:

7.3.6. Տնօրենը կազմակերպում է ընդհանուր ժողովի արձանագրության վարումը:

7.3.7. Տնօրենն իրավունք ունի առանց լիազորության գործարքներ կատարել Ընկերության անունից, եթե գործարքի գումարը չի գերազանցում զուտ ակտիվների մեծության 5%-ից:

Ընկերության տնօրենը պետք է գործի բարեխղճորեն և ողջամիտ՝ ի շահ իր կողմից ներկայացվող Ընկերության: Նա պարտավոր է Ընկերության կամ Ընկերության մասնակիցների պահանջով հատուցել իր կողմից Ընկերությանը պատճառած վնասները: Ընկերությանը պատճառած վնասների հատուցման հայցով դատարան դիմելու իրավունք ունի Ընկերությունը կամ նրա մասնակիցը:

7.3.8. Եթե գործարքի գումարը գերազանցում է զուտ ակտիվների 5%-ը, հրավիրվում է կառավարման խորհրդի նիստ:

7.3.9. Ընկերության տնօրենը իր իրավասության սահմաններում՝

ա) Առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից,

բ) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական ռեսուրսները,

գ) կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային,

դ) տալիս է լիազորագրեր, այդ թվում՝ վերալիազորման իրավունքով լիազորագրեր,

ե) բանկային հիմնարկներում բացում է հաշվարկային և այլ հաշիվներ,

զ) Ընկերության ստորաբաժանումների, մասնաճյուղերի, ներկայացուցչությունների և հիմնարկների ընթացիկ գործունեության վերահսկումը,

է) Ընկերության աշխատակիցների պարգևատրման և նրա չափի որոշումը (100 000 դրամից ավելի պարգևատրման դեպքում անհրաժեշտ է խորհրդի համաձայնությունը),

ը) իրականացնում է Օրենքով, Ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված կամ Ընկերության ընդհանուր ժողովի կողմից տրված այլ լիազորություններ և հանձնարարություններ,

թ) Ընկերության ներքին գործունեությունը կարգավորող փաստաթղթերի (Ընկերության ներքին փաստաթղթեր) ընդունումը,

ժ) Ընկերության անունից կնքում է այնպիսի գործարքներ, որոնք օրենքով և սույն կանոնադրությամբ վերապահված չեն Խորհրդի և Ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությանը,

ի) իրականացնում է հաստատված բյուջեի կատարումը:

8. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ, ՄԱՍՆԱՃՅՈՒՂԵՐԸ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

8.1. Ընկերությունն ունի հետևյալ կառուցվածքային ստորաբաժանումները, որոնց միջոցով կազմակերպում և իրականացնում է իր գործունեությունը.

- հիվանդանոցային ստորաբաժանում,
- ամբուլատոր-պոլիկլինիկական (արտահիվանդանոցային) ստորաբաժանում,
- «Երեխաների և Դեռահասների Առողջության Ինստիտուտ»
- «ԱրԲԵՍ» առողջության, ցերեկային խնամքի ու բուժման և վերականգնողական կենտրոն:

8.2. Հայաստանի Հանրապետության տարածքում Ընկերությունը ունի հետևյալ մասնաճյուղերը.

- Ապարանի վերականգնողական- առողջարանային կենտրոն:
- Առողջության պահպանման, երեխայի զարգացման գնահատման և վերականգնողական բուժման, ցերեկային խնամքի ու բուժման, դիսպանսեր հոկողության և բուժման մասնաճյուղեր (կենտրոններ) Գավառում, Ալավերդի, Իջևան, Վարդենիս, Ճամբարակ, Արտաշատ:

8.3. Հայաստանի Հանրապետության տարածքում և նրանից դուրս Ընկերությունը չունի այլ կառուցվածքային ստորաբաժանումներ, մասնաճյուղեր և ներկայացուցչություններ:

9. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

9.1. Ընկերությունը, նրա մասնակիցների միաձայն որոշմամբ, կարող է կամովին վերակազմակերպվել կամ լուծարվել:

Ընկերությունը կարող է դատական կարգով վերակազմակերպվել կամ լուծարվել միայն օրենքով սահմանված դեպքերում և կարգով:

Եթե լուծարվող ընկերության գույքի արժեքն անբավարար է պարտատերերի պահանջները բավարարելու համար, ապա այն կարող է լուծարվել միայն սնանկության հետևանքով:

Ընկերության վերակազմակերպման ու լուծարման կարգը և պայմանները սահմանվում են Օրենսգրքով և այլ օրենքներով:

9.2. Ընկերությունն իրավունք ունի վերակազմավորվել բաժնետիրական ընկերության:

9.3. Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած՝ այդ մասին իրավաբանական անձանց պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից: